


ՀԱՅ-ԵԿԵՂ ԵՑԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ



ՅՈՒՆԻՍ — 1901

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻ ԺԶ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

	էջ
1. Կեանք Յիսուսի. — Մասն Դ.	160
2. Անգղիկան Բահանայի Բարոզ Հայկական Եկեղեցւոյ վերայ .	169
3. Առաջարկ Բարեխորհրտան Եկեղեցական Մասենից .	177
4. Թղթակցութիւն . —	
Կանակ Հնդկաստանէն .	183
Նանակ Աւերիկայէն .	183
Նանակ Լօնդոնէն .	184
5. Քերթուած . —	
Հոգի եւ Մարմին . Երկու Ոստիկներ (շար .)	188

Հանդիսիս բաժանորդագրինն է ամեն
սեղի համար տարեկան 4 Շիլինգ կամ 5 Փրանք,
վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Փրանք թղթատարաւ :
Տանկաստանի քաղաքաց մէջ ձեռքէ կը ծախուի
հասը՝ Երկու (2) Դանեկանի :

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան
վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել
առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

ՀԱՅ-ԵԿԵՂ ԵՅԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

Թիի 16

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1901

ԿԵԱՆՔ ՅԻՍՈՒՍԻ

ԻՐ ԾՆՆԴԵՆԷՆ ՄԻՆՁԵԻ ՀԱՄԲԱՌՆԱԼԸ ՓԱՌՕՔ Ի ՅԵՐԿԻՆՍ

Ի ԳԵՐ. ՏԵՐ ՂԵՒՈՂԴ ԵՊԻՍԿՈՊՈՍԵ ՇԵՄԱՆԵԱՆ

Դ

Օրինական Մաքրութիւն Ս. Կոյսին . — Ընծայումն Փրօկ-
չին ի Տաւնարն . — Ծերունի Սիւհուն . — Աննա Մարգարեանի ին :

Յիսուսի թլփատութենէն ու անուանակոչութենէն
ետքը՝ կըմնային տակաւին կրկին արարողութիւն-
ներ , երկուքն ալ օրինական , որոնք պիտի կատարուէին Տաւն-
արին մէջ : — « Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նոցա ըստ
օրինացն Մովսիսի — կ'ըսէ Ս. Ղուկաս աւետարանիչ — ամին
զնա (զՅիսուս) յերուսաղէմ յանդիման առնել Տեառն »
(Ղ. Կ. Բ) :

Իրարմէ տարբեր երեք օրէնքներ պարտաւորեցին Ս. Կոյսն
ու իր աստուածային Որդին հետեւելու սահմանուած կա-
նոնին : Առաջինը՝ Յիսուս մանկան ծննդեան քառամու-
սեան էր՝ ըստ որում « Կին ոք — կըսահամանէր օրէնքը —
եթէ ծնանիցի արու , պիղծ լիցի զեօթն օր . . . եւ յաւուրն
ութերորդի թլփատուցէ զմարմին անթլփատութեան նորա ,
եւ զերեսուն եւ զերիս աւուրս նստցի ի վերայ սրբոյ արեան
իւրոյ : Յամենայն ինչ սուրբ՝ նա մի մերձենայցէ , եւ ի
սրբութիւնն մի մտցէ , մինչեւ լցցին աւուրք սրբութեան
նորա » (Ղ. Կ. ԺԲ. 2, 3) :

Երկրորդը՝ կըպատկանէր նորածին մանուկին — « Սրբեա

դու ինձ զամենայն անդրանիկ նախժին որ բանայ զամենայն արգանդ ի մէջ Իսրայելի» (Եւ. ԺԳ. 2) :

Աստուած էր որ զբաւ այս օրէնքը եւ հրամայեց Մովսէսի որ գործադրէ՝ երբ Իսրայելացիները ելան Եգիպտոսէն : Ինքը՝ Աստուած , բացարձակ ու միահեծան Տէր ամէն բանի, կամեցաւ որ Հրեաները՝ կրօնային ու հանրապատկան զաչինքով մը պարտաւոր ըլլան ճանչնալու իր ծայրագոյն իշխանութիւնը . ուստի պահանջեց որ ամէն ծնօղ իր նախժին արու անդրանիկը իրեն նուիրէ՝ որով , յանձին նուիրուած այդ անդրանիկին , միւսներն ալ իրեն նուիրուած կ'ըլլային :

Այս անդրանիկներն իր Աստուածութեանը կրպատկանէին արդէն ա՛յն մեծահռչակ սոսկալի գիշերէն ի վեր , որ ատեն բնաջինջ ըրաւ Եգիպտացիներուն բոլոր անդրանիկները՝ խնայելով Իսրայելի անդրանիկներուն : Փրկուած կեանքեր էին անոնք աստուածային յատուկ նախախնամութեամբ . եւ , փրկուած կեանք մը , ամենամեծ իրաւունքով , պէտք է նուիրուել անոր՝ որ փրկեց զինքը : Ըշմարիտ գրաւական մըն է այդ կեանքը , նշանակ երախտագիտութեան՝ հանդէպ հրաշալի բարերարութեան Փրկողին :

Արդարեւ , ապաղային մէջ , Աստուած բարեշրջեց այդ օրէնքը՝ վերապահելով զայն միայն Ղեւտացւոց անդրանիկներուն որոնք կոչուած էին ծառայելու Խորանին Վիպտրքեան (Թ՛Կ-+. Գ. 1, 2, 3 .) եւ սակայն Իսրայելացիներուն միւս անդրանիկներն ալ հաշիւէ դուրս թողուած չէին , անոնք ալ կ'ընծայուէին Աստուծոյ , միայն թէ իւրօքանչիւրէն հինգ սիկղ , այսինքն , արդի գրամական հաշուով , մօտ հարիւր զահեկանի գումար մը առնուելով՝ կրփրկանաւորուէին (Թ՛Կ-+. Գ. 40 - 51) :

Իսկ երրորդ օրէնքը կը վերաբերէր նորածին անդրանիկին մօրը , որ իր սրբութեան օրհորուն լրման ժամանակ կրպարտաւորէր՝ փոխանակ իր անդրանիկին , ողջակէզի համար տարեւոր գառն մը , եւ իր մեղաց քաւութեանը համար՝ տատրակ մը կամ աղանի մը մատուցանել Տաճարին . իսկ եթէ ազբատ էր , թոյլատրուած էր իրեն բաւականանալ զոյգ մը տատրակներով կամ աղանիներով , որոնց մէկը՝ փոխանակ անդրանիկին , եւ միւսը՝ իր մեղաց քաւութեան համար ողջակէզ կը մատուցանէր քահանան , ու մայրը կը ըրբուէր ծննդական աղտեղութենէն , ու նորածին մանուկը կրփրկանաւորուէր (Եւ. ԼԳ. 20 եւ ՂԵ-+. ԺԲ. 6, 28) :

Անապատիան էր աստուածային մանկան ծնունդը, անապատիան էր եւ Մարիամ իւ մայրը՝ որ ի Հոգւոյն Սրբոյ յղացեալ, ի ծննդեան եւ յետ ծննդեան, մնաց միշտ կոյս անապատիան, եւ սակայն այս ամենամաքուր մօր կատարեալ սրբութիւնը գաղտնիք մըն էր՝ մարդիկներէ ծածկուած. յետեւաբար չէր կարող հրաժարիլ հասարակ մայրերու պարտականութենէն. հարկ էր որ ինքն ալ՝ դուստր Իսրայելի ու մայր Իսրայելացի, օրէնքի պահպանութեամբ, տեղի չի տար գայթակղութեան: Ուստի, թէպէտ ինքը՝ աստուածային չնորհիւ, օրէնքէ գերիվեր, սակայն մարդկային խոնարհութեամբ հնազանդելով օրէնքին, ընդհանուր մարդկութեան գայթակղութեան տեղի չի տալու համար, կըզրկէ իր անձը կուսական փառքին արգար իրաւունքէն, կ'առնէ իր գրգաստուն Միածինը բազուկներուն վրայ, կըհաննի Տաճարը, կըմանէ Հեթանոսաց Գաւիթը՝ որ անսուրբ մարդոց սահմանալայն էր, կըսպասէ հոն իր կարգին, գիտէ որ՝ ամենազէտն Աստուած կըճանչնայ իր մաքրութիւնն ու սրբութիւնը, ա՛լ փոյթը չէ թէ անսուրբներու գաւթին մէջ կըգտնուի: Եւ ահա՛ կըհասնի ժամանակը, կ'երթայ, կըկանգնի զբանը առջեւ երկրորդ գաւթին, ուր սրբացեալ Հրեաներն եւեթ արտօնուած էին մտնել: Կուգայ հերթապահ քահանան, կ'ընդունի այդ աղքատիկ մօր-ձեռքէն տատարակներու զոյգը՝ իրրեւ աղքատիկ ողջակէզ՝ երկու անմեղներուն մեղաց քաւութեան զոհերը, կըկարգայ անոր զլիւտն վրայ սրբացուցման սովորական աղօթքը ու կ'առաջնորդէ անոր՝ մտնելու երկրորդ Գաւիթը, որ այլ եւս, իբրեւ սրբացեալի, բա՛ց էր անոր քայլերուն առջեւ: Հոն, քահանային բազուկներուն կըյանձնէ զայն՝ որ կը զրացնէ ամէն բազուկ՝ ընծայելու համար Աստուծոյ, ու վճարելով աղքատիկ գանձէն որոշեալ փրկանագինը՝ հինգ սիկլ, փութկոտ գուրգուրանքով մը կըվերագնէ իր Միածինը, կ'առնէ քահանային գիրկէն. կ'ընդգրկէ աստուածային մանուկը: — Անտարակոյս Յիսուս եւս պէտք չ'ունէր փրկանաւորուելու. ինքը չէր ծնած՝ « ո՛չ յարեմէ, ո՛չ ի կամաց մարմնոյ և ո՛չ ի կամաց առն », յաւէտ կուսական արգանգի մը ամենասուրբ ծնունդ՝ պէտք չունէր երբեք՝ ո՛չ սրբութեան ու ո՛չ մեղաց քաւութեան. ինքը եկած էր աշխարհի ընդհանուր մարդկութիւնը փրկելու ու սրբացնելու համար, և սակայն կըհաճի մտնել մովսիսական օրէնքին ներքեւ, կընպատակի անոր՝ զոր իր մահուամբը պիտի

լրացնէր: Ո՛հ, որքա՛ն սքանչելի ես, աստուածայինդ մանուկ, որքա՛ն սքանչելի բու ամենակարող անկարողութեամբդ, այն տկարութեամբդ մանաւանդ որով տիեզերք մը կըբռնես բու զողովջ այդ մանկական փիղ մէջ: Որքա՛ն սքանչելի ես, Գառնուկդ գորովալիբ, որ մասերէդ կ'ելլես, կըբարձրանաս Աստուծոյ տաճարին Աեզանին վրայ, իբրեւ ողջակէզ քու արիւնովդ գնելի անդրանիկ մարդկութեան անսրբութիւնը մաքրելու համար: Որքա՛ն թեթեւուկ բնու մըն ես, մանուկդ Յիսուս, կոյս մօրդ փափուկ բազուկներուն մէջ՝ զորոնք երկնային զօրութեամբդ կըզօրացնես:

Ո՛վ դուք, Հայոց մայրեր, օրինակ առէք Ս. Կուսէն, դուք ալ տարէ՛ք, ընծայեցէք ձեր զաւկները Աստուծոյ որ ա՛յնքան սերտիւ սիրեց մանկութիւնը, ընծայեցէ՛ք որ օրհնուին, սրբուին ու փրկուին: Այն Աստուածն է որ միացուց զձեզ սուրբ ամուսնութեան անխղիւ կապովը, այն Աստուածն է որ ազատեց զձեզ ծննդական երկունքի մահուընէն, ու կեանք տուաւ ձեր զաւկներուն: Դուք, մայրեր, այն Աստուծոյն կըզարտիք ձեր ու ձեր զաւակներուն կեանքը. տարէ՛ք, ընծայեցէ՛ք Աստուծոյ որպէս զի զօրութեամբ Յիսուսի ըլլան Եկեղեցւոյ սուրբ զաւակներ, թշուառ Ազգիս օգտակար մարմիններ և անկեալ մարդկուկութեան ընտրելագոյն անդամներ:

Յիսուս, քառամօրեայ մանուկ, համաձայն օրինաց Տաճարը ընծայուելով, իբրեւ Որդի Աստուծոյ, իր իսկ ձեռքով իր անձը ընծայեց աստուածային Հօրը. — Հա՛յր ամենակարող — ըսաւ իր սրտի խորէն — դու չի կամեցար նոյն իսկ պարարտ գառներու պատարապը, այլ ևս հաճելի չենքեզ մեղաց քաւութեան համար ընծայուած ողջակէզները. զիս ընդունէ, Հա՛յր ամենակալ, առաջին անդրանիկը քու բոլոր արարածներուդ: Յանուն իմ եղբայրներուս, անոնց անդրանիկը, անոնց պետը, անոնց ներկայացուցիչը զի՛ս ընդունէ գառն տարեւոր, իբրեւ բոլորանուէր պատարագ անոնց քաւութեանը համար: Չի ճանչցան մարդիկ քու աստուածային մեծութիւնդ ու զայրացուցին արդարութիւնդ. եկա՛ւ ժամանակը, Հայր արդար, յանձին քու Միածին որդւոյդ ա՛ն քու աստուածային վրէժդ անոնցմէ, զա՛րկ ու լուա՛ քու մարդացեալ որդւոյդ արիւնին մէջ անոնց ամէն նախաաինքները: Հո՛ս, այս Տաճարին մէջ, քու նուիրական սեղանիդ վրայ, քու քահանաներուդ ձեռ-

քերուոն մէջ , ահա՛ քուկդ իմ ես , ու քեզ կ'ընծայուիմ ամէնուն կողմէ , զիս ընդունէ քու բովանդակ վրիժուցդ առարկայ : — Եւ ահա՛ այն ատեն ընդունեց Աստուած պատարագ մը հաճելի և հաւասար իր աստուածութեան , պատարագ մը բոլոր պատարագներու փոխարէն , պատարագ որ անէծքը օրհնութեան փոխեց , ատելութիւնը սիրոյ ու մահը կեանքի . պատարագ մը վերջապէս , որ ամէն պատարագները նուիրագործեց :

Յիսուս , Տաճարը ընծայուելէն ետքը վերագնուեցաւ , վասն զի սահմանուած չէր Տաճարին ծառայելու , ինքն էր կենդանի տաճարը որ պիտի քակուէր ու երեք օրէն շինուէր . մինչդեռ նիւթական տաճարը կործանուելով քար քարի վրայ պիտի չմնար , պատարագներն ու զոհերը պիտի ջնջուէին իսպառ , պիտի փոխանակէր հիներուն եւ պիտի տեսէին ցկատարած աշխարհի : — Վերագնուեցաւ Յիսուս հինգ սիկզ արժողութեամբ եւ զոյգ մը տատրակներու փոխարէն , այս էր տիեզերաց փրկութեան գինն ու արժէքը , որ գինն էր նաև յիտին աղքատին : Բայց այս աղքատը պիտի վերագնէր բովանդակ մարդկային ազգը , ու իր աղքատութեամբը պիտի ճոխացնէր զայն — « վասն ձեր աղքատացաւ որ մեծատունն էր , զի դուք նորա աղքատութեամբն մեծաօխը » (Բ. Կ. ր. Ը, 9) , պիտի վերագնէր զմեզ ո՛չ արծաթով կամ ոսկով , այլ իր արեան գնովը . աստուածային արիւնը պիտի ըլլար մարդկային ազգի փրկանակը :

Երբ Յիսուս իբրև հասարակ մանուկ մը աղքատիկ կ'ընծայուէր ու կը վերագնուէր , ո՛չ որ ուշադրութիւն կը դարձնէր իրեն , ո՛չ ալ իր մօտը որ իբրև հասարակ կին մը կը նշմարուէր Տաճարին մէջ , թէպէտ թագաւորական սերունդէ , թէպէտ երկնային անիմանալի հրաշից առարկայ , հրաշքը իսկ , իր կոյս-մայրութեամբն ու աստուածածնութեամբը : Աստուած սակայն , երկնաւոր Հայրը , բարձրացուց զանոնք , իրենց այդ աղքատիկ վիճակին մէջ , Տաճարին խուռն բազմութեան դէմ յանդիման : — « Եւ ահա էր այր մի յերուսաղէմ — կ'ըսէ սրբազան Աւետարանիչը — որոյ անուն էր Սիմէոն , եւ էր այրն այն արդար և երկիւղած , և ակնունէր մխիթարութեանն Իսրայելի , և Հոգի սուրբ էր ի նմա : Եւ էր նորա հրաման առեալ ի Հոգւոյն սրբոյ մի տեսանել զմահ , մինչեւ տեսցէ զօծեալն Տեառն » (Ղուկ. Բ. 25) :

Ս. Աւետարանի խօսքերը կ'ապացուցանեն թէ երևելի անճաւորութիւն մըն էր Սիմէոն , թերևս որդին Գամա-

ղիէլի որ Սիւննեղր իոննի նախագահն էր, և որուն աշակերտեցաւ Սուրբն Պօղոս: Այն հինաւուրց արդարներէն էր Սիւմէօն որ հաւատքով կ'ապրէր, լուսամտ դադարներով կը գատէր ամէն բան, ու կը վարուէր կրօնի վարդապետութեանց համաձայն ուղղութեամբ: Մին էր այն հինաւուրց նահապետներէն որ Մեսիայի գալստեանը կը սպասէին հոգւոյ հոգւով եւ զգացմանց զգացմամբ, գիտնալով որ ա'յն պիտի ըլլար և եթ « միսիթարութիւնն Իսրայելի »: Մարգարէ մըն էր Սիւմէօն, վերջապէս, լի' Հոգւով Սյրով, որով ծանօթացած էր աստուածային հրաշքներուն, որոնցմէ մին էր այն աստուածային պատգամը թէ « Մահ չի պիտի տեսնէր մինչեւ չի տեսնէր Տիրոջը օծեալը »: Այս պատկառելի ծերունին նոյն հոգւով առաջնորդուեցաւ Տաճարը այն պահուն երբ մանուկն Յիսուս իր մօրը գրկացը մէջ կ'ընծայուէր Աստուծոյ, լուսաւորուեցաւ երկնային լուսով մը, եւ, ի տես այդ տկար ու աղքատիկ մանուկին, ձայն մը իր սրտի խորերէն աղբարարեց իրեն — ահա' այս է այն Մեսեան որուն կը սպասէիր երկար ատենէ ի վեր, բուն յետիւտիք և իր ձեռք միակ առարկան, Իսրայելի միսիթարութիւնն ու մարդկային աղբի փրկութիւնը: — Ուրախութեամբ կ'առլցուի Սիւմէօն, յարգանքը կը դիտէ նորածինը, պատկառանքը կ'առնէ զայն իր մօրը գրկէն, կը սեղմէ ձեռունափառ կուրծքին վրայ, կը բզբուէ, կը համբուրէ եւ աստուածային ներշնչումով օրհնութիւն մը կը կարգայ հոն: Նախ իր ուրախութիւնն ու երախտագիտութիւնը կը հըռչակէ — « Արդ արձակես — կ'ըսէ — զձառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց: Հոյս ի յայտնութիւն հեթանոսաց, եւ փառս ժողովրդեան քում Իսրայելի » (Ղուկ. Բ. 29, 30, 31, 32):

Այո, Յիսուս յոյսն է բոլոր հեթանոսաց. անոր լուսովը հեթանոսք դուրս ելան մոլորութեան աղջամուղջէն, անոր լուսովը բացին իրենց աչքերը Աւետարանի ճշմարտութեան վրայ: Երանի' մեզ որ մեր օրոցքէն սկսեալ մինչև ցղերեզման անոր լուսովը լուսաւոր, գերեզմանէն անդին անոր լուսապայծառ փառքովը պիտի յապենանք ցյաւիտեան: Յիսուս ո'չ միայն յոյս է, այլ փառքն էր նաև Իսրայելի ժողովրդեան որուն ծոցին մէջ հաճեցաւ ծնունդ առնել: Այդ ժողովուրդն եղաւ կենդանի վկայ անոր կեանքին և առաջին հրաւիրեալը Աւետարանի հաւատքին:

փառքն էր այդ ժողովրդեան , բայց առաւելագոյն ևս փառքն եղաւ անոնց որ չի տեսան ու հաւատացին :

Յետոյ Սիմէօն Ս. Կուսին գրկացը յանձնելով աստուածային մանուկը՝ ցաւալի կերպով կրմարդարէանայ անոր ապագան, ու գուշակ կը հանդիսանայ անոր մօրը վիշտերուն : — « Ահա՛ — կ'ըսէ — սա՛ կայ ի գլորումն և ի կանգնումն բազմաց ի մէջ Իսրայելի , եւ ի նշան հակառակութեան , և ընդ քո իսկ անձն անցցէ սուր : » — Ոչ որ կարող է փրկուիլ առանց Յիսուսի . նա՛ պատճառն է մեր փրկութեան : Անկէ կու գայ մեր փրկութիւնը , իսկ մեր դատապարտութիւնը մեր անձէն կը բխի : Սիմէօն կանուխէն կը նախատեսէ որ բարեպաշտ սրտերէ ա՛յնքան ջերմիւ սիրոյ ընդունուած Յիսուսի վարդապետութիւնը վատ ու ամբարիշտ մարդոցմէ պիտի մերժուէր , եւ թէ հակառակութիւնն ա՛յնքան առաջ պիտի երթար որ ի մահ և մահու խաչի պիտի մատնէին զՅիսուս : Կընախատեսէ Սիմէօն թէ այս ցաւալի վախճանը պիտի ըլլար միանգամայն սուր մը որ պիտի մկտուէր Յիսուսի մօրը սրտին . . . : Ա՛յսպէս ուրեմն և դու , Մարիամ , հիմայ ա՛յնքան երջանիկ , քու վիշտերդ ալ , մայրենի սրտիդ մէջ տակաւ պիտի սաստկանան Միածին Որդւոյդ ցաւերուն հետ մէկտեղ . քու կեանքդ ալ ուրեմն մարտիրոսութիւն մը պիտի ըլլայ ցվախճան օրերուդ և , ցո՛րքան այդ գորովալից դառնը մօտենայ իր զոհանուէր ժամուն , « և ընդ քո իսկ անձն անցցէ սուր » . . . :


Բայց ի՞նչ պիտի ըլլայ հետեանքը այս ամէնուն . . . : — Սիմէօն կը յայտնէ վախ իր վերջին բառերով — « զի յայտնեսցին ի բազում սրտից խորհուրդք » — այս է անա հետեանքը . . . Յիսուսի երկրաւոր կեանքին , անոր երկնաւոր վարդապետութեանը , անոր քարոզած ճշմարտութեանը հանդէպ՝ որոնք արեւու լոյսէն աւելի փառաւորագոյնս պիտի ճառագայթեն , յայտ յանդիման պիտի նշաւակին սրտերու բոլոր գաղտնի զգացումները , մարդկային կեղծաւոր դիմակները պիտի իննան , քօղերը պիտի պարզուին ու այն ատեն պիտի տեսնուի Յուդայի թագաւորութիւնը երկու բանակի բաժնուած , անհաւատներու և հաւատացեալներու բանակներ , որոնց առաջինները իրենց կեղծաւոր և անհաշտ տեղութեամբը զՅիսուս պիտի հալածեն ա՛յն պատրուակաւ՝ թէ չէ նա այն սպասուած ճշմարիտ Մեսիան որ Դաւթի աթոռը պիտի վերականգնէր , իսկ հաւատացեալները պիտի ընդունին այդ աղքատիկ Որդի Մարդոյ

Փրկիչն աշխարհի, ա՛յն զոր մարգարէր նախատեսեցին :

Դեռ Սիմէօն խօսքերը բերանն էին, և անա անդիէն նոր վկայ մըն ալ, նոյնպէս Աստուծո՛ւ ներշնչուած կուգայ յայտարարել նորածին մանկան կեանքը. — « Եւ անգ էր — կ'ըսէ սրբազան Աւետարանիչը — Աննա մարգարէ, գուտոր Փանուելի, յազգէ Ասերայ, ո՞ւ ինքն անցեալ էր զաւուրբբ բազմօք, կեցեալ ընդ առն առն եօթն ի կուսութենէ իւրո՛ւն, և էր այրի ամաց իբրև ութսուն և չորից, որ ո՛չ մեկնէր ի Տաճարէն, այլ պահօք և ազօթիւք պաշտէր զցայգ և զցերեկ » (Ղուկ. Բ) :

Ահաւասիկ քրիստոնեայ այրիներու աիպար կենցաղ մը, զոր կընդրկայացնէ Ս. Ղուկաս. բայց այդ նկարագրին հետ, սրբազան Աւետարանիչը կը յայտնէ միանգամայն թէ՛ նորածին մանուկը այնքան սկար ու անկարող մայրենի գրկացը մէջ, հզօր ու ամենակարող է սակայն իր աստուածային անձը ապացուցանելու համար, տեղւոյն վրայ վկաներ բերելով . . . : « Եւ սա ի նոյն ժամու յարուցեալ զոհանայր զՏեառնէ և խօսէր զնմանէ ընդ ամենեօին որ ահն ունէին փրկութեանն երուսաղէմի : — Եւ կ'իմանան այս մարգարէութիւնները անոնք միայն որ Իսրայելի ճշմարիտ զաւակներն են :

Արդ Յիսուս, դեռ նոր աշխարհ եկած, տակաւին քառասնօրեայ մանուկ բազմաթիւ վկայութիւններով կը հաստատէ թէ ինքն է ճշմարիտ Փրկիչն աշխարհի : Մարիամ, Եղիսարեթ, Չաքարիա, Հրեշտակները երկինքէն, Հովիւներ, Սիմէօն, Աննա, իբրև աշխարհի Փրկիչն, Որդւոյն Աստուծոյ և Որդւոյ մարդկան իրենց մեծարանքն ու երկրպագութիւնները կը մատուցանեն : Անոր կեանքը նախապէս քարոզեցին և անոր, ի փրկութիւն աշխարհի, խաչի մահը կանխաւ գուշակեցին : Մենք ալ մեր գովութիւններն ու գոհութիւններն միացնենք անոնց, երկրպագենք, ազօթենք անոնց հետ ձայնակից նորածին այդ աստուածային մանկան, սիրենք, գգուենք զոհանուէր այդ գառնուկը մտորին և ըսենք « Օրհնեալ եկեալ Անուամբ Տեառն ի փրկութիւն ազգի մարդկան » :



ՔԱՐՈՉ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՅ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ ՅԱՆԳԼԻԵՐԷՆԵ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Պ. ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆՅ

(Մի ֆանի տարւոյ յառաջ Տարսնի Սրբազան Առաջնորդ՝ Կեր . Տեր Մկրտիչ Եպիսկոպոս ի Հեղիյս Լուսինախոսքեան գնացած շինելոյ՝ այդ երկրի քե հայազգիներից եւ քե օտարազգիներից մեծարուեցաւ անեկուրեփ : Մասնաւորապէս մեկ անգամ հրաւիրուեցաւ Կաշիարու Անգղիական Ս. Սեպիանոս եկեղեցւոյ մեջ երեկոյեան ժամերգութեան ներկայ գտնուիլ : Ետիկ Սրբազանաբխն իւր հետ ունենալով Կաշիարու Հայոց եկեղեցւոյ Աւագերեց՝ Արժ . Տեր Պսակ ֆահանայն Յակոբջանեանց , որ Է հայրն ուղև ֆարոզք քարգնանողի , շուրջառ իսպ ու գառազան առնելոյ՝ մասնակցեցաւ քաթորիկ եւ անքոյջ արարողութեան ներկայ լինելին վերջ՝ արձակեան օրհնութիւնն եւս ինքն (Եպիսկոպոսն) հայերեկ լեզուաւ արտասանեց եկեղեցւոյ թեմեկն : Հայ Եպիսկոպոսի ներկայութե անք ֆաջալերեալ՝ նոյն եկեղեցւոյ երեց՝ ԱՐԺ. ՍՓԷՆՍԸՐ ԴԱՅԸՐ այս ֆարոզն իօսեցաւ :)

« Միութիւն Հաւատոյ : » — Եփես. Գ. 13 :

Ութուտան հարիւր ամօք յառաջ , փրկչական 60 թուականին , հնազարեան Երուսաղէմ քաղաքում մի մեծ կրօնական խռովութիւն կրտիրէր : — Գրիստոսի նորահաստատ Եկեղեցւոյ այն ժամանակի ամենաջերմ քարոզիչն Եփեսոսից յերուսաղէմ եկած էր՝ ինքզինքն արդարացնելու համար ընդդէմ այն հրէամիտ ամբաստանութեան՝ թէ Մովսիսական օրէնքն արհամարհում է : Այդ քարոզիչն ուղեց գործով ևս ցոյց տալ իւր համակրանք և սէր առ հին Մովսիսական կրօնն , և իւր մի քանի ուղեկիցներով հանդերձ՝ մտաւ Ս. Տաճարն՝ ինքզինքն հրէական մաքրութեան օրինաց ենթարկելու համար : Սակայն մինչդեռ մէկ կողմէ իւր գաղափարակիցներին գոհացում տուեց , միւս կողմանէ մոլեռանդ Հրեայք բորբոքեցան նորագէմ՝ ենթադրելով թէ իւր հեթանոս ուղեկիցներն Տաճարի նուիրական շէնքի մէջ մտցրած է : « Շարժեցաւ քաղաքն ամենայն » . և այդ քարոզի կեանքը վտանգի մէջ էր , մինչև Հռովմէական զինուորներ հազիւ հազ կարողացան զնա ազատել խուժանի ձեռքէն և ամբողջ փոխադրել : Երբ զօրապետը հարցանէր

« Ո՞վ ես դու » նա պատասխանէր , « Ես եմ այր Հրեայ ի Տարսոնէ Կիլիկիցեաց , ոչ աննշան քաղաքի քաղաքացի : » — Այս անձն էր Պողոս Առաքեալն և այս երեկոյ մեր մէջ ունիմք մի մարդ որ Ս. Պողոսի սիրած ծննդավայրի եպիսկոպոսն է : Մեր այս աւուր խորհրդածութեան բնաբան առ Ս. Պողոսի առ Եփեսացի քրիստոնեայս ուղղեալ այն խօսքեր , որով այդ Սրբազան Առաքեալն յանձնարարէ Քրիստոսի անուն կրող բոլոր անձանց՝ հաւատոյ միութեան մէջ ապրիլ . — « Մինչև հասցուք ամենեքեան ի մի միաբանութիւն հաւատոց և գիտութեան Որդւոյն Աստուծոյ , յայր կաստեալ ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի : »

Այն ոգին որ քաջալերեց Տարսոնացի հինաւուրց Առաքեալին , քաջալերում է Տարսոնի արդի եպիսկոպոսին ևս , որ այս երեկոյ իւր բարի օրինակաւ և գործնական ապացոյցով հաստատում է առաքելական միութեան ճշմարիտ ոգին , որով միանգամայն ձանաչում է մեր (Անգլիկան) Եկեղեցին իբրև մի հարազատ ճիւղ Քրիստոսի կաթնուղիկէ Եկեղեցւոյ , որում խոստացաւ Տէրն մեր ասելով . « Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի : » Ինձ այնպէս թուի որ « հաւատոյ միութեան » գաղափարն այսօր գործնական կերպարան է առնում , երբ տեսնում ենք մեր մէջ այս երեկոյ Հայոց Ազգային հին Եկեղեցւոյ մէկ եպիսկոպոսն և մի քահանայ , որք ոչ թէ լոկ հանդիսատես լինին , այլ թափօրին մասնակցելով և մեր Եկեղեցւոյ գոհաբանական աղօթից ձայնակցելով՝ ճշմարիտ միութեան ոգին ի յայտ ածեն : Այս քրիստոսաւանդ միութեան զգացումն է որ զիս մղէ խօսել ընդ ձեզ ի վերայ պատմութեան , վարդապետութեան եւ արարողութեանց Հայ. Եկեղեցւոյ :

Հայոց մէջ Քրիստոնէութիւնն առաջին անգամ քարոզեցին Բարդուղիմէոս և Թադէոս առաքեալք , որք մկրտեցին Եգիսիոյ իշխան Աբգար , որոյ մասին անվաւեր Աւետարանագիրք պատմեն՝ իբր թէ մէկ անգամ զՓրկիչն Հրէից ձեռօք սպանուելէ ազատած է : Պատմութիւնը շատ քիչ տեղեկութիւն տուած է մեզ Քրիստոնէական կրօնի զարգացման մասին ի Հայս զկնի Աբգարու մինչև երրորդ դարու վերջերն . կրակապաշտ իշխանաց հալածանքներն զքրիստոնեայս անյայտութեան եւ լռելիայն գործելու ստիպած էին : Երրորդ դարու մէջ իրաց վիճակ այս էր , երբ Աստուած զՍուրբն Քրիզոր , — անուանեալն Լուսաւորիչ Հայոց , — յարոյց , որպէս զի վերանորոգէ Ս. Բարթուղիմէոսի և Ս. Թադէոսի

անդաստանն : Ս. Գրիգոր եղաւ Հայոց մեծ Առաքեալն , և նոյն պաշտօնը կատարեց այդ ազգի համար ինչ օր Ս. Օգոստինոս մեր (Անգլիական) նախահարց համար՝ կատարեց , երբ Քրիստոնութիւնը այնքան յաջողութեամբ քարոզեց Բրիտանիոյ մէջ : Ս. Գրիգոր ծնաւ յամի 257 իշխանազն ծնողներէ . բայց ինչ ինչ քաղաքական խռովութեանց պատճառաւ նորա ծնողք որպէս եւ նորա բոլոր սպգականներն սպանուեցան , և միայն ինքն իւր դայեակի շնորհիւ այդ ընդհանուր կոտորածէն զերծ մնաց : Կեսարիա տարուելով քրիստոնէական ինամբով և դաստիարակութեամբ մեծցաւ . և ի չափահասութեան ամուսնանալով՝ երկու որդի ունեցաւ , որք յետոյ Ս. Գրիգորին յաջորդեցին ի կաթողիկոսութեան Հայոց : Ս. Գրիգորի գործունէութիւնն Հայոց մէջ սկսաւ այն ժամանակ երբ իւր հայրենիքը վերագարձած միջոցին հրաւիրուեցաւ կոտորած մատուցանել և երկրպագութիւն տալ , զոր պաշտօն մերժելով՝ չարաչար ասանջանաց կնիթարկուեցաւ և ի վերջոյ երկարամեայ բանտարգելութեան զատապարտեցաւ : Սակայն երբ Աստուծոյ յայանութեամբ բանտէն ազատուեցաւ , մեծ յաջողութեամբ քարոզեց , և Կասպից Մովի եզերքէն մինչև Եփրատայ ափունքն Ս. Աւետարանն տարածեց : Ս. Գրիգոր իսկզբան աշխարհական գոլով՝ քնաց Կեսարիա և Ս. Ղեւոնդիոս եպիսկոպոսի ձեռամբ ընդունեց քահանայութեան և եպիսկոպոսութեան աստիճան . ապա վերագաւնալով ի Հայս՝ իւր հայրապետական աթոռն հաստատեց Վաղարշապատ քաղաքում , ուր զՄիածին Որդին Աստուծոյ տեսած էր . այս պատճառաւ Վաղարշապատ քաղաքն ևս մինչև ցայսօր կրկոչուի նաև Էջմիածին :

Ներկայ Էջմիածինը , որ կրգտնուի Ալարատ լեռան գրեթէ ստորոտում , մի մեծ վանք ունի՝ իբրև մէկ և կէս միոն երկարութեամբ պարսպով պատած : Այս մեծ չքջափակում կրգտնուին այլ և այլ շէնքեր ի բնակութիւն Հայրապետին և իւր վանական միաբանութեան , որոց մէջէն կ'ընտրէ իւր Սինոզի անդամներն : Կան նաև նորընծայից դպրոց և կրթարան , գրատուն՝ բազմաթիւ անգլին ձեռագիրներով լի , տպարան , հիւրանոց ուխտաւորաց համար , և այս ամենի մէջ տեղը Պատրիարքական հին Եկեղեցին , զոր Ս. Գրիգոր ինքն կառուցանել տուեց , որ թէ եւ այլ և այլ յաջորդող կաթողիկոսաց ձեռամբ նորոգուած է , սակայն իւր նախկին ձևը միշտ պահած է :

Վերագառնանք պատմութեանն : Յամի 331 Ս. Գրիգոր

ծերացած և յողնած իւր ծանր աշխատութիւններէն՝ իւր երէց որդին Արիստակէս կաթուղիկոս շինեց, և ինքն առանձնացաւ Սեպուհ լերան մի այր, ուր մի քանի տարի առանձնակեաց ճգնութեամբ անցնելէն յետոյ՝ մեռաւ: Յիշատակութեան արժանի է որ Արիստակէս ներկայ էր Նիկիոյ ընդհանրական ժողովոյ մէջ, և այդ հռչակաւոր ժողովոյ կանոնաց ներքոյ իւր ստորագրութիւնը դրաւ ի շարս միւս հայրապետաց: — Հայոց եկեղեցական պատմութեան ամենափայլուն էջերն են կազմում այն բուն ջանքեր որով նորահաւատ արքայն և հայ եկեղեցականք աշխատեցան իւրեանց ժողովրդեան լուսաւորութեան համար՝ դպրոցներ բանալով և ուշիմ հայ երիտասարդներ այն ժամանակի հռչակաւոր յունախօս քրիստոնեայ ուսումնասլայրեր զրկելով: Այդ աշխատութեանց արդիւնքն էր՝ Ս. Սահակ կաթուղիկոսի օրով և ջանիւք (փրկչական 390 - 440 թուականներին) և Ս. Մեսրոպ Երեւելի վարդապետի առաջնորդութեամբ կատարուած Աստուածաշունչի այն անգուգական թարգմանութիւնն, որ մինչև ցայսօր ընդունուած է բոլոր եւրոպացի բանասիրաց կողմանէ իբրև ամենալաւ թարգմանութիւն, և «Թագուհի թարգմանութեանց» անուամբ պսակուած է:

Հայ. Եկեղեցւոյ սկզբնաւորութեան պատմութիւնն այս է: Յետագայ զարուց մէջ Հայք շատ անգամ անտանելի հալածանաց և ընդդիմութեանց հանդիպած են, սակայն Աստուծոյ նախաինամութիւնը պահած պահպանած է այս Եկեղեցին մինչև ցայսօր իբրև վկայ ճշարտութեան կաթուղիկէ և առաքելական աւանդութեանց Գրիստոսի Եկեղեցւոյ:

Հայ. Եկեղեցւոյ այս փառաւոր պատմութեան մէջ մէկ տխուր և ողբալի էջ կայ. այն է՝ այդ ամենահին և ուղղափառ Եկեղեցւոյ բաժանումն և ցրտիւն միւս Արեւելեան Եկեղեցիներէն: Աւելի ողբալի և ախոսելի է մանաւանդ այն պատճառաւ, որ այս բաժանում և ցրտութիւն բոլորովին անհիմն ու անտեղի է, և միմիայն թիւրիմացութեան արդիւնք է: Երբ յամի 451 Քաղկեդոնի ժողովն Նեստորի և Եւտիքէսի մոլորութիւնը դատապարտեց, Հայք առտնին քաղաքական ծանր ինդիքներով պարապէին, և հետեւաբար միջոց չունեցան արժանահաւատ պատգամաւորաց միջոցաւ բուն եղելութիւնը հասկանալ. և Քաղկեդոնի ժողովոյ լուրն իսկզբան միայն այդ ժողովոյ ամենակատաղի հակառակորդներէն՝ Եւտիքէսիներէ և Նեստորականներէ լսեցին, որք իրական անցքերը խեղաթիւրելով՝ Քաղկեդոնի

հարց միտքն իբրև շարափառ ներկայացուցին : Հայք յայն-
ժամ աւելի ստոյգ անդեկուծիւն ստանալու միջոց չունենա-
լով , և տեսնելով այդ առթիւ իւրեանց մէջ իսկ սպառնա-
ցող գտուածեանց սկիզբն՝ ստիպուեցան այդ դժուար
մոլորութիւնները դատապարտելու միջոցին նաև Քաղկեդոնի
ժողովը դատապարտել :

Իժբաղտարար յետագայ դարուց մէջ ոչ թէ միայն անկարելի
եղաւ այս թիւրիմացութիւն ուղղել , այլ հին վերքի պէս
հետզհետէ գրեթէ անբուժելի դարձաւ . որքան Հայք և
Յոյնք ի միմեանց անջատ մնացին , նոյնքան աւելի օրա-
րացան և ջրօացան : Եւ թէպէտ այլ և այլ ժամանակներ
միութեան փորձեր եղան , և մասնաւորապէս երկոստասնե-
րորդ դարու մէջ իւրեանց հռչակաւոր Ներսէս Կաթողիկո-
սի օրով և ջանիւք , սակայն այստեղ ևս դժբալդ քաղա-
քական դէպքեր ընդմիջելով՝ արգելք եղան այդ ցանկա-
ցեալ և ցանկալի միութեան : Չորեքոստասներորդ դարու
վերջերն սկսաւ Հայկական Եկեղեցւոյ Մարտիրոսական
այն մեծ շրջանն որ մինչև մեր օրերը հասած է : Ազգային
ինքնուրոյն վիճակը կորուսանելէն յետոյ , աշխարհիս ամեն
կողմեր թափառեցին կամ տարազէր եղան . ամեն դժուարու-
թեանց և նեղութեանց ենթարկուեցան , բայց մինչև
վերջն հաւատարիմ մնացին իւրեանց հաւատքին ու Եկեղե-
ցւոյն : Ուր որ գնացին իւրեանց հաւատքն ու Եկեղեցին
միասին տարան , և իւրեանց ազգային կրօնական աւանդու-
թիւններն անփոփոխ և երկիւղածութեամբ պահեցին և
պահում են մինչև ցայսօր :

Գալով Հայ. Եկեղեցւոյ վարդապետութեանց՝ նախընթաց
պատմական անարկուծութիւններէն ըստ բաւականին տեսանք
որ Հայոց Եկեղեցւոյ բաժանումն որ եւ է իսկական վար-
դապետական տարբերութեան վերայ հիմնեալ չէ . այլ պար-
զապէս թիւրիմացութեամբ սկսաւ , իսկ այժմ միմիայն
իրաւասութեան և կանոնական օրինաց ինդիր է , որով
Հայ. Եկեղեցին անկախօրէն կառավարէ զիւր հօան : Հայք
դաւանին Տեսան մերոյ իսկական ներկայութիւնը Ս. Հաղոր-
դութեան մէջ : Հաղորդուիլ ցանկացողք պարտին նախապէս
կատարեալ զղջմամբ և առանձնական խոստովանութեամբ
քահանայէն արձակում ստանալ , և ապա մերձենալ ի Ս.
Մարմին և Արիւն Տեսան , որ մատակարարի երկոքում տե-
սակօք : Յունաց պէս մանուկներին Ս. Հաղորդութիւն կրտսն
անմիջապէս զինի Ս. Մկրտութեան և Դրոշմի :

Ս. Պատարագը կարելի է մատուցանել ամենայն օր . բայց սովորաբար կրմատուցանուի կիրակի , Շաբաթ և Նօն օրեր : Ս. Հաղորդութեան մէջ գործ անուամբ հայն անխմոր է , զոր իւրաքանչիւր անգամ պատարագիչ քահանայն իւր ձեռքով կը պատրաստէ , և ձեռով՝ փոքրիկ բոլորակ բլիթ մի է փրկչական (խաչելութեան) պատկերն ունելով : Թէ քահանայք և թէ ժողովուրդ պարտին ծոմ բերանով հաղորդուիլ : Ս. Պատարագը կարելի չէ կատարել զկնի միջօրէի . ի բաց առեալ Զատիկ և Զբօրհնեաց ճրագալուցին և Աւագ Հինգշաբաթին , երբ երեկոյեան պատարագելու սովորութիւն ունին . սակայն նոյն իսկ այս դէպքում ծոմապահութեան կանոնն անխախուս է :

Հայոց Պատարագամատոյցն իսկզբան յօրինուեցաւ Սրբոց Բարսղի և Աթմնասի և Սուրբ Գրիգոր Լուսաւորչի պատարագամատոյցներէն հաւաքելով , այլ հետզհետէ այլ և այլ փոփոխութիւններ կրեց իւրեանց ազգային կիրառութեան յարմար՝ յոյն և լատին ազբիւրներէ ևս պատշաճ յաւելումներ ստանալով , այնպէս որ մինչդեռ էական մասերն Առաքելական դարու հնութեան տիպարը պահած են , իւր ներկայ ամբողջութիւնը Արևելեան Եկեղեցոյ ամենագեղեցիկ արարողութիւն կոչուելու արժանի է : — Ս. Պատարագի միջոցին քահանայի գործ անամբ զգեստներն շատ նման են Արևմտեան Եկեղեցոյ զգեստուց , և գրեթէ նոյն խորհրդաւոր նշանակութիւններն ունին : Ս. Սեղանի վերայ մոմ կը վառեն աղօթքի և մասնաւորապէս Ս. Պատարագի միջոցին . և յաճախ խունկ գործ կածեն սրբազան պաշտամանց ժամանակ : Ս. Հաղորդութիւնը (Սուրբ Մասն) կը պահեն առանձին Մասնատուփի մէջ և կը դնեն Ս. Սեղանի մօտ յատկապէս շինուած ընծայաբանի կամ սրբատան մէջ : Սեղանի առջև մի կանխիկ կը կախեն , զոր միշտ վառ կը պահեն : Եկեղեցական չէնքի ներքին կարգաւորութիւնը աւելի Արևմտեան քան թէ Արևելեան եկեղեցեաց կրնամանի : Յունաց պէս Ս. Սեղանը Իլլուստրասիս կոչուած մեծ պատկերակապ անջրպետով չեն բաժանել , այլ նուիրական ընծայքն (հաց ու գինին) պատրաստելու , և քահանայի հաղորդուելու միջոցին , մի մեծ վարագոյր կը քաշեն Ս. Սեղանի առջև : Կղերիկոսք և զպիւրք որպէս և համայն ժողովուրդն միշտ դէպ ի Ս. Սեղանը (արեւելք) կանգնած կ'աղօթեն : — Ս. Սեղանն ընդհանրապէս զարդարուած է (իւրաքանչիւր եկեղեցոյ կարողութեան համեմատ) մոմակալներով , արծաթեայ կամ ոսկի խաչով և արծաթա-

պատ կամ ոսկեկազմ Աւետարանաւ և այլն :

Հայոց Եկեղեցւոյ կառավարութեան պնդանքն է՝ իւրեանց Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսն , որոյ պաշտօնական Աթոռն է Ս. Էջմիածնի վանքն : Երբ Կաթողիկոսն իւր Սինոդականաց խորհրդակցութեամբ որեւէ մի կրօնական վճիռ արձակէ , այդ վճիռ անբողոքելի է , և Հայկական Եկեղեցւոյ իւրաքանչիւր անհատի վերայ պարտաւորել է : Կաթողիկոսի պաշտօնական տիտղոսն է . — « Ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհատանելի կամօքն Աստուծոյ Կաթողիկոս Ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարք Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի : »

Կաթողիկոսի իշխանութեան ներքոյ գտնուած բոլոր Հայկական եկեղեցիք բազմաթիւ թէմերի կամ վիճակների բաժանեալ են , իւրաքանչիւր վիճակ մէկ եպիսկոպոսի անմիջական հսկողութեան ներքոյ : Ինչպէս Կաթողիկոսն ինքն ընդհանուր ազգի քուէովը կ'ընտրուի , նոյնպէս ևս իւրաքանչիւր եպիսկոպոս իւր թէմի ժողովրդեան ընտրութեամբն և Կաթողիկոսի ձեռնադրութեամբ կը հաստատուի :

Ըստ ներկայ սովորութեան թաղային քահանայի պաշտօն վարող անձինք պարտին ահուանացեալ լինել նախ քան զձեռնադրութիւնն . և ձեռնադրուող ընծայացուն պարտի լինել ոչ պակաս քան 30 տարեկան : Բարձրագոյն կղերն , այսինքն , եպիսկոպոսունք , ըստ այժմեան սովորութեան վանական քահանայներէ (վարդապետներէ) կ'ընտրուին :

Հայ. Եկեղեցւոյ պատմութեան , վարդապետութեան և արարողութեանց այս գլխաւոր կէտերը շօշափելէն վերջ , ցանկամ սուկաւ ևս խօսել Հայ և Անգլիկան հոգեւորականաց միջև տնդի ունեցած բարեկամական և փոխադարձ սիրոյ յարաբերութեանց վերայ : — Ս. Էջմիածնի մայրավանքում թաղուած է մարմինը մի երեւելի անգլիացւոյ՝ Պարոն Մէգգօնէլլի , որ Պարսից արքունիքը զեսպանութեան պաշտօնով զրկուած էր և իւր ճամբորդութեան միջոցին մեռաւ : Ս. Էջմիածնի այն ժամանակի Կաթողիկոսն արժանաւձայել յարգանքը թաղել տուաւ նորա մարմին և մի փառաւոր արձան և տապանաքար դնել տուաւ նորա գերեզմանի վերայ :

Հէնրի Մարտին Հնդկաստանի նշանաւոր միսիոնարն , Թորատ քաղաքում վախճանեցաւ յամի 1812ին , և նոյն տեղի Հայազգի եպիսկոպոսն հրամայեց որ նորա թաղումը կատարեն հայ քահանայից թաղման առթիւ կատարուած շքով ու հանդիսով :

Հանգուցեալ Ներսէս Կաթուղիկոսն երբ յամի 1814ին ի Բաղդադ կրգանուէր, տեղեկանալով որ նոյն քաղաքի մէջ հայ քահանայ չկար, պատուերած էր իւր կղերին որ ցանկացողաց համար որ և է հոգեւոր պաշտօն մատուցանեն, մասնաւորապէս ի զէպս մատակարարութեան Ս. Սորհրդոց և ինքն Սրբազան Հայրապետն քանիցս անձամբ կատարած էր այդ սիրոյ պաշտօն՝ Անգղիացի հիւանդաց այցելելով և մահուան անկողնոյ մէջ Ս. Հաղորդութիւն տալով :

Կալկաթու հանգուցեալ Միլման Եպիսկոպոսն ամենաջերմ բարեկամութիւն պահէր նոյն քաղաքի Հայոց Եկեղեցւոյ քահանայից հետ, ժամանակ առ ժամանակ նոցա եկեղեցին դնալով և մինչև իսկ Հայ քահանայի ձեռքէն հաղորդուելով : Նոյնը արած են ուրիշ շատ անգղիացի քահանայք և աշխարհականք :

Կանտերբրիոյ արգի Արքեպիսկոպոսն մի քանի անգամներ իւր անկեղծ սիրոյ զգացումներն արտայայտած է . օրինակի համար, երբ Լօնդօնի մէջ Հայք մի մատուռ պիտի բանային և նախապէս նորին Սրբութեան դիմած էին՝ արտօնութիւն խնդրելով, Արքեպիսկոպոսն մեծ հաճութիւն ցոյց տուաւ Լօնդօնարնակ Հայոց ձեռնարկութեան :

Մեր այս երեկոյեան խորհրդածութիւնք մեզ կրգուցացնեն հապճեպով չգատել մի արեւելեան հին Եկեղեցի, որով զմեզ ևս դատապարտած կըլինիմք : Վասն զի ինչպէս Հայոց Եկեղեցին Եւաիքական մոլորութեան կասկածի ենթարկուած է, նոյնպէս և մեր (Անգլիկան) Եկեղեցին Քալվինի վարդապետութեանց հետեւող լինել կրկարծուի : Բայց որքան մին նոյնքան և միւսն բոլորովին անտեղի է, և թիւրիմացութեան (չասեմ թէ տգիտութեան) արգիւնք է :

Գոհութիւն Տեառն որ օր ըստ օրէ մեր ժողովուրդն սթափումէ անաբբերութենէ և աշխատումէ նորէն զբաւել այն դիրքը որ իրաւայի իւրեան կրպատկանի և կրվայելէ, և հակառակ այն խոջնդոտներին և ընդդիմութեանց որովք չըջապատեալ է թէ ի ներքուստ և թէ արտաքուստ, հետ վհետէ կ'աշխատի բարձրացնել իւր վարդապետութիւն և սրբազան ծէսք և արարողութիւնք հին կաթուղիկէ Եկեղեցւոյ օրինաց աստիճանին :

Մեր մեծապէս կըքաջալերուիմք երբ Հայոց պէս վաղեմի բրիտանեայ ազգի վկայութիւն մեզ ի նպաստ կրգայ : Նրբ կըտեսնեմք, օրինակի համար, Հայոց Եկեղեցին, որ զրեթէ Առաքելոց ժամանակէն ի վեր հաստատուած է, և հինգերորդ դարէն ի վեր միւս եկեղեցիներէն բոլորովին

անջատեալ՝ առանց որ և է օտար (Արեւելեան կամ Արեւմտեան) ազդեցութիւն կրելու, Տեառն մերոյ իսկական ներկայութիւնն ի Ս. Հազորգութեան կ'ուսուցանէ և կըքարոզէ, մեզ համար այլ ևս որ և է ուրիշ նկատում չի կարող գոյութիւն ունենալ՝ Կաթողիկէ Եկեղեցւոյ այդ կարեւոր վարդապետութիւնն չընդունիլ կամ չգաւանել իւր ամբողջութեամբն և կատարելութեամբն :

Ահաւասիկ հաւատոյ միութեան պտուղն, զոր այսքան օգտակարութեամբ կըվայելեմք, թէպէտ և տակաւին շատ հեռու եմք այն կատարեալ միութենէ որ մեր սրտից ամենաջերմ բաղձանքն է: Տացէ՛ Տէր որ ինչպէս այս երեկոյ Սրբոց Թաղէոսի և Բարթողիմէոսի հաստատեալ Եկեղեցւոյ ներկայացուցին մեզ աղօթակից եղաւ, և քիչ վերջը պիտի մեզ իւր առաքելաչնորն օրհնութիւնը պարզուէ, նոյնպէս և դեռ աւելի յաճախութեամբ Կաթողիկէ Եկեղեցւոյ հաւատքը ունեցող բոլոր քրիստոնեայք միաբանին և սիրով և կըբայրութեամբ դիմեն իւրեանց երկնային Վարդապետին և Փրկչին, որ իւր չարչարանքէն յառաջ այնքան աղերսանօք կ'աղօթէր առ Հայր «Վասն ամենայն յիս հաւատացելոց, զի ամենեքին մի իցեն, որպէս դու, Հայր, յիս, և ես ի քեզ, զի և նոքա ի քեզ իցեն.» որում շնորհաց արժանի արասցէ Ամենակալն Աստուած զմեզ զհաւատացեալ ժողովուրդս իւր. Ամէն :



ԱՌԱՋԱՐԿ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԻՑ

ՅԱՐԺ • ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅԷ ՊՕՅԱՃԵԱՆ .



(Ահա կրնրաստուիտիւք այն բարեկարգութեան առաջարկ, ինչպէս խոսուցած էիք, զոր Արժ. Հեղինակն նախակի ձեռով առ Կ. Պօ, այն Սրբազան Պատրիարքն ուղղած էր ժառանգակին : — Ծան. Խմբ. :)

Ամենապատիւ եւ բարձրաչնորն Սրբազան Հայր. ի համբոյր աստուածարեալ Աջոյդ մատչիմ խոնարհաբար :

Շատոնց ի վեր տեսնալով եկեղեցեաց մէջ կատարուած թերի եւ սխալ արարողութիւնները, որոնց պատճառները

ինչև կատի առնելով կրտսնամ քիչ մը յանհատութենէ եւ յանհոգութենէ կղերական դասուն՝ յառաջ կուգայ . քիչ մ'ալ յանբաւականութենէ եկեղեցական մատենից . կրփախաքէի ծանուցանել : Հիմայ որ պատեհ առիթ ունեցայ , եւ խոստացած էի մեր յառաջուան գրած վիճակացուցին մէջ , զնոյն Տեղեկագիր այսօր կըմատուցանեմ առ ոտս բարձր սրբազնութեանդ գերաստիճանեալ Աթոռոյն՝ առաջի պատկառելի կրօնական ժողովոյ Ազգային Կենդրոնական Վարչութեան :

Գիտեմ ասոնք ոչ թէ Ձեզի անձանօթ էին մինչև ցարդ , այլ՝ ժամանակիս բերմունքն չներեցին ասանկ բաներով զբաղել . սակայն եւ այնպէս եթէ հրամայէք , կըգտնուին ի մայրաքաղաքիդ այնպիսի գիտնական եւ կարող աճաւորութիւններ որ զասոնք կարեն օր ըստ օրէ մի մի հրատարակել , եւ ամէն եկեղեցիներ փոխեն եւ նորոգեն իրենց հնացեալ գրքերը : Օրացոյցներ յառաջ ժամանակաւ հինգ մեծ օրերուն Տաղաւար լինելը կընշանակէին . մօտ տարիներս մէկին (տաղաւարին) կամ երկուքին խաչ կըզնէին . հիմայ բոլորովին վերուցած են ինչպէս նաեւ բակլախորան եւ ուրիշ ժողովրդական ազգային բառերը : Ասոնք ոչ թէ ի սպառ անհետացնելու են , այլ ի խորշս ձեռագիր Տօմարաց գտնուածներն ալ ի լոյս հանելու են : Անցեալ տարի՝ բուն բարիկենդանի մասին երեք մեծամեծ Աթոռոց Օրացոյցքն անհամաձայն գտնուեցան ի միմեանց :

Եւ եթէ կարելի է հին եւ նոր Տօմարներն ալ միացնելու ջանքն լինէր յԱզգին , եւ Աստուածաբանութիւն մի եւս պատրաստուէր ի պէտս եկեղեցականաց : Շատ կըցաւիմ որ Գեր . Դուրեան Եղիշէ Սրբազան՝ ուրիշներուն երկասիրութեանց քննութեանը վրայօք իր անգին օրերը կ'անցունէ , ինքն ազգին համար պիտանի գրքեր չպատրաստեր : Արդ այս մեր տկար խորհրդածութիւններն Ձեր ամէնիմաստ խոհականութեան թողով .

Մնամ , ամենախոնարհ ծառայ ,
ԿԱՐԱՄԵՏ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՊՅՅԱԷԱՆՑ .

Քուսնով , 22 Յունուար 1899 .

Տօն Ծննդեան և Աւետեաց

Ի Հոգետաւիղ նուագաց աստուածեղէն տառից խրատաւեալ՝ առաջի կրօնական պատկառելի ժողովոյ , մտաչիմ այսօր հարցանել զՀայրդ իմ Սրբազան , եւ ցծերդ իմ իմաստուն :

Ամենայն քրիստոսադաւան ազգք եւ ազինք, որք զսօն Մանգեան Տիւան ի քսաներորդում հնգերորդում աւուր Գեկտեմբեր ամսեան կատարեն, եւ զԱւետեացն՝ նոյնպէս ի քսան եւ հինգն Մարտի սօնեն, Հայ. Եկեղեցի զՄանգե Փրկչին ի վեցերորդում աւուր Յունուար ամսեան կատարելով, վասն է՞ր յեօթներորդում աւուր Ապրիլի սօնէ զԱւետեացն յիշատակ, եւ ոչ ի վեցերորդում:

Ընտիր գրչագիր մատեանքն միւր առ հասարակ ի վեցն Ապրիլի ասնն զսօն Աւետեացն, որպէս Կիրակոսի Արեւելցւոյ Յայտաւուրքն, Շնորհալի յԸնդհանրականին, որ յուր գրչագրաց տպագրեցաւ յԵրուսաղէմ, եօթն օրինակք եղեալ են ի վեցն Ապրիլի: Տպագրողն սխալ կարծելով, ուղղագրել կամեցեալ է. եւ յեօթն Ապրիլի դնէ: Զարմանք մեծ, ի հնաբիտութեան եւ միանգամայն յեկեղեցական պատմութեան ներկուռ անձն այն Կարապետ Վարդապետ Շահնազարեան, չգիտեմ է՞ր վասն արդեւք տգիտացաւ զայդ ի ծանօթութիւնս պատմութեանց նախնեաց, առ ի նմանէն տպագրելոց: Բազում ամօք յառաջ քան զնա՝ տպագրեալ էր բացատրութիւն շարականաց, յորում բազմամուտ հեղինակն եւս՝ յեռ յայլ եւ յայլ ժամանակս, զկատարումն սօնին պատմելոյ, ի վեցն Ապրիլի դնէ:

Թէպէտ յետ - եւ - յառաջգրութիւնն միոյ աւուր ոչ ինչ կարէ ստնանել, սակայն զի՞նչ այլ ճաշակ քաղցրագոյն կայցէ քրիստոնէի ուրեմն, քան զմարմնառիկ տնօրէնութեան բանին. եւ ինձ իսկ ի գլխովին որ զքահանայութեան ձեւ կերպարանեմ, պարտ անհրաժեշտ է կազմ եւ պատրաստ լինել առ ի տալ զպատասխանին, որոց հարցանիցեն:

Կարմիր Կիրակի

Զկարմիր կիրակի տեսանեմք յօրացուցի եղեալ ի չորրորդ կիրակի զվնի Զատիին: Նոյնպէս եւ Փաղղիացիք ունին ի նմին աւուր ժապիւլէ անուանեալ, որպէս գրէ Նորայր ի Բառարանին. բայց ինձ թուի ի նոր կիրակի լինել. որում շարականն եւս ճայնակից լինի. եւ տաղարանն առաւել բացայայտ գրէ այսպէս ի գանձն նոր կիրակի:

« Իսկ այսօր կոչի սա նոր կիրակի. խորհրդով ի լի: Զատիկ կրկնակի կարմիր անուանի. այս սուրբ կիրակի Զի այսօր ներկի. ձեռքն թումայի սուրբ առաքելի:

կողէն խոցածի . արեամբն Յիսուսի . կարմիրն ոչ փոխի
եւ այն զի կոչի . կարմիր կիրակի եւ յոյժ պատշաճի : »

Ճուսոց Գիրք եւ այլ Եկեղեցական մատենք

Չոր ինչ խոստացաք յառաջին թղթի մերում (*) յաղագս սխալ եւ թերակատար արարողութեանց , համառօտիւք զնոցանէ ի դէպ համարիմ այսօր խօսել :

Եկեղեցական գրեանքն մեր՝ զգուշաւոր քննութեամբ սրբազրութեան կարօտ են : Ճաշոց գիրքն՝ ըստ Ոսկանեան աղճատանաց տպագրեալ՝ յայտ ուրեմն է Ձեզ , զի լի է վրիպանօք , նոյնպէս եւ ըստ նմանէ Գալուստ զպրին , եւ Երուսաղէմի տպագրութիւնքն . որք ոչ կարեն զեր ի վերոյ միմեանց լինել :

Յառաջին տպագրութեան Ճաշոցին՝ թողեալ զընտիր ընտիր օրինակս թագաւորականս , զհետ կրթեալ են Ոսկանեան Սատուածաշնչին : Չայտու ժամանակաւս եւս թողլով հրամանաւ ձերով զօրինակս Ճաշոցաց , տպագրիչք հետեւին սրբագրեալ Սատուածաշնչին Հ.Արսէնի Բագրատունայ : Վասն զի Եկեղեցի վարժարան իմն է , ուր միանգամ սխալ ընթերցմունք տարբանայցեն ի միտս հասարակաց , յայնմհետէ յանհնարիցն է ուղղել զսխալանս :

Փոքր եւ Մայր մատենք

Մաշտոց՝ թէ Փոքր եւ թէ Մայր Մաշտոց անուանեալն . նոյնպէս զխառնիխուռն աղճատանս բարձեալ բերէ յինքեան : Չեպիսկոպոսի եւ զԿաթողիկոսի ձեռնադրութեան կանոնս , եւ զմիւռոնորհնէնք չիք մեր տեսեալ : Ո՛ր գիտէ եւ այնքիկ եւս որչափ աղաւաղեալ են , եւ ըստ արտուղի անկեալ . եւ տարաձայնին ի միմեանց օրինակք Ստոյ եւ Աղթամարայ յօրինակէն Ս. Էջմիածնի : Չօրինակս այսց մեծամեծ Աթոռոց , եւ այլուստ՝ ուր գտանիցին ընտիր օրինակք , զամենեսեան ի մի հաւաքելով ուղղագրեալ եւ փոխանակ անհեղեղ եւ ստուարակարկատ մատեան ի ձեռին ունելոյ , յերիս հատորս տրոհել հաճէին տպագրիչք : Չառաջին հատորն՝ ի պէտս քահանայից պատրաստեալ , զերկրորդն՝ յաղագս Սրբազան Արհի Եպիսկոպոսաց , եւ զերրորդն Սրբազնագոյն Հայրապետաց նուիրեալ ի փաստ

(*) Տեղեկագիր վասն քահանայից եւ եկեղեցեաց՝ որ ի համօրէն Պուլկարիա :

Հայ . Ս. Եկեղեցւոյ : Եւ ո՛ր գիտէ ո՛րչափ ընտիր բանք եւ ոճք վսեմականք եւ կամ բացատրութիւնք խորհրդոց վիր երեւէին յայնժամ ի պէտս գրականութեան :

Երանաչնոր՝ հախնիքն մեր ի հեռաւոր վայրաց անտի , հոգ յանձին կալան եւ ջան սաստիկ , ընտրանօք հաւաքել զայնոսիկ ի զարգ եւ ի պայծառութիւն Եկեղեցւոյ , եւ զորս ոչ գտին , ինքեանք եղեն յորինիչք եւ կարգադրիչք ի ժամու պիտոյից , ըստ տուչութեան Հոգւոյն Սրբոյ : Մեք այսօր որդիք այնպիսեաց հարց , տկարանամք ժողովել , եւ թողումք ընդ երեսս երկրի ցան եւ ցիր սփռեալ : Եւ զայս եւս յուշ ամեմք . կթէ ի գլուխս իւրաքանչիւր կանոնաց՝ ի պէտս կիրառութեան նոցին մի մի յառաջաբանութիւն , եւ կամ առաւել բացայայտակի ասացուք՝ խրատաբանութիւն եւ հրահանգ ցուցանիցի նօսր գրութեամք , իբր թէ զ՛ի յետին ժամանակաց լուսաբանեալ լինելն նշանակիցէ : Յայնժամ կատարեալ լինի գործն : Զոր օրինակ յառաջին կանոնի անդ Մկրտութեան զամենայն պատշաճեալ խրատս ամբիովել զնել ի նախերգանս , նոյնպէս ի Պսակին որ ինչ հարկաւոր եւ պէտք իցեն բովանդակել ի նմին : Եւ զի լսեմք զոմանց քահանայից՝ եթէ պսակաւորք բազումք իցեն , զստ եւ որիչ պսակին . եւ այլք զբազմութիւն պսակելոց ի միասին պսակին , յայնժամ ոչ եթէ երկուքն մի մարմին լինին . այլ ամենեքեան միահամուռ մի մարմին լինին : Յունաց Մաշտոցն եւս հակառակ է այսմ բանի :

Եւ ոմանք եւս , յորժամ մկրտութիւն առնել կամիցին , եւ կամ պսակ զնել , զչուրջառ եւեթ զանձամբ առեալ սկսանին յարարողութիւն . եւ ուսեալ եկեղեցական ոմն փոխանակ զթագն ի գլուխ կապելոյ ի պսակին , զնարօտն զուսովքն արկանէ փեսային եւ հարսին , որպէս զուրար . եւ զայս ոչ թէ զանց զկանոնօք Եկեղեցւոյ առնել կամելով , կամ արհամարհելով , այլ վասն զի չեւ ի կորզան կրթութեան եկեղեցական արարողութեան մտեալ , անտեղիակ է ազգային սո լորութեանց եւ արարողութեանց : Եթէ զիտնաւորն յանգէտս՝ զայս ինչ գործիցէ , տգէտք եւ անուսք զի՞նչ ոչ առնիցին :

Զնիւթոց նարօսին եւ զերանգացն , ոչ ինչ նշանակեն մաշտոցք . միմիայն Մայր Մաշտոցն երկքգունեան ասէ : Բայց յորո՞ց գունոց իցէ եւ ինիւթոց՝ ոչ : Հ. Ս. րսէն Բագրատունի եւս երեքգունեան ընդունի ի հարսանեկան քերթ-

ուածս իւր . եւ զխորհուրդն առնու ի Հաւատ , ի Յոյս եւ ի Սէր : Եւ ընդ այնպիսւոյ առն գիտնաւորի ոչ կարեմ ի վսեր գալ , այլ՝ ինձ առաւել հաւանութեան թուի մեկնութիւն Յակոբայ պատրիարքի Նալեան , երկգունեան ասէ , զկարմիրն ի խորհուրդ մարդեղութեան Քրիստոսի առեալ , եւ զկանաչն՝ յանթառամ աստուածութիւնն , եթէ զերեքգունեանն եւս ընդունիցեմք , յայնժամ զսպիտակն առնումք ի խորհուրդ Մկրտութեան եւ կամ զջուրն ի գինի փոխելոյ ի Կանա Գալիլեացոց : Ի սկզբան պատկին Մաշտոցք խրատ տան զնարօսն ոլորելոյ , բայց վասն կապելոյ , եւ ե՛րբ՝ չասնն ինչ բնաւ . զկինի պատկին՝ զխորհուրդ թագվերացի կատարէ . գործ վարմանալի՛ : Վասն Ազգահամարի , ընդարձակ բացայայտութիւն զնիւ հարկ է . զաւուրս եւ զժամս պատկազրութեան նշանակել եւ այլն :

Ի հնունմն՝ կոյս ընդ կուսի պատկէին եւ այրի ընդ այրւոյ , վերջոյ՝ թոյլտուութեամբ Եկեղեցւոյ սովորոյթ եղև այրի ընդ կուսի պատկել . զինչ ինչ առնիցին յայնժամ ի յուսմունս թերացեալ քահանայք , եւ կամ սկսնակք եւ նորոգ նուիրեալք ի քահանայականն պաշտօն :

Յերբորդ սլաակին զի՞նչ : Հոգելոյս վարդապետն մեր երբեմն գտաւ ի քաղաքի ուրեմն ի հանդիսի հարսանեաց , յետ ընթրեաց՝ քահանայք տեղւոյն՝ մինչդեռ ամփոփեալ ռաիւք (ծալապատիկ) ի գետնի նստէին (ըստ հին դրութեան) առանց եկեղեցական զգեստ ինչ ունելոյ զիւրեամբ , սկսանին զՀալաւ օրհնէքն , գողցես իմն ցուցս բառնային , կամ երգս ինչ գեղգեղէին : Յայնժամ վարդապետն լռեցուցանէ զնոսա , եւ հրամայէ յոտին կանգնեալ շուրջառաւ երգել :

Եւ ահա այսպէս հաստատուն կանոն ոչ ունելով ի ձեռին , բազում անկարգութիւնք լինին ի տեղիս տեղիս : Օգտագոյն իմն թուի յաչս մեր , եթէ ի մի եւ ի նոյն խորհուրդ կրկնակի կամ երբեակ կսնոնք եւ արարողութիւնք գտանիցին ի հին Մաշտոցս՝ զանազանեալք ի միմեանց , զամենեւին զնոսա զնել ի կարգի , առ անկորուստ պահելով զնախնեանց անդուճգանցն զվաստակս : Միայն զընտրելագոյնն նախապատիւ ցուցեալ :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԷՆ

Արժ . Տէր Հայր ,

Խորին շնորհակալութիւնս կ'յայտնեմ որ այսպիսի սոգոգուտ մեծ և օգտակար ծառայութիւն մը ընելու փափաքը ունեցաք: Գիտեմ՝ Տէր , Հայ - Եկեղեցի կրօնաթերթիդ վերստին հրատարակութեամբն շահասիրութիւնը չէ Ձեզ այս գործին մէջ մղողը . այլ եկեղեցասիրութիւնը հայեցրարցդ մէջ տարածել , մանաւանդ թէ մեծ օգտակարութիւն պիտի լինի մեր ուսման կարօտ կղերականաց միաքը արթնցունելու:

Արդէն ամենազօրաւոր ապացոյցներով հաստատուած է , որ մարդս լուսաւորութեան և եկեղեցասիրութեան ասպարեզին մէջ դիւրութեամբ յառաջ երթալու համար՝ ուսումնականութեան գիմելու է . վասն զի ուսումնականութիւնը՝ ինչպէս որ հաստատուած է , ա՛յնպիսի սքանչելի կերպով կ'ընդարձակէ մարդուս իմացական կարողութիւնը որով շատ դիւրութեամբ և ազատութեամբ կրնայ մէկը գործածել իր մտաց տրամաբանական կարողութիւնը , և յատուկ կերպով կրնայ իր երեւակայութեան առջեւը բերել այն ամեն միջոցները որոնցմով կրնայ թէ զինքը ըստ պատշաճի կառավարել , և թէ՛ իր սոգգին օգտակար ըլլալ , և տնցընել իր կարճատեւ կեանքը աւելի քիչ ապերջանկութեամբ . և այն ալ Աստուծոյ կամացը և մարդկային պարտականութեանց համեմատ:

Արդարև հոյ կղերականի մը այսպիսի ձեռնարկութիւններ ընելը մեծ յանդգնութիւն է , կ'յուսանք որ ալ աւելի զոճողութիւններ ընելու պատրաստունն Ձերին բարձր տաղանդաւոր գրիչովը եթէ ժամանակդ ներէ:

Կ'մաղթեմ Ամենակարող Աստուծմէն երկար կեանք որ Ձերին սոգոգուտ փափաքին լիովին յառաջագիմութեամբ ամենայն յաջողութեամբ Ձեզ հասցունէ:

Մ'նամ , սուրբ ողբունացդ կարօտ ,
ֆո խանարճ ծառայ .
ԿԱՐՈՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Կայկաթա , 14 Մարտ 1901.

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

Արժ . Տէր Հայր ,

Այս ընդարձակ ֆաղսֆին մեջ օտարներով եւ օտար եկեղեցիներով շրջապատեալ կոցուրեանս մեջ մեծապէս կրճխիքարուիս « Հայ - Եկեղեցի » ու , իւրաքանչիւր քիչ ինձ կրհասնի որպէս ցոյ բարի , եւ գայն կարդայիս վերջ պահ մը կարօտութիւն կառնուի մեր Հայկական եւ առաքելական

Եկեղեցիէն , որոն հետի մնացած եւ գրեթէ ինն սարիներէ իջեր :

Յսկնչախա ցաւ կրզգաւ որ յիշեալ երկար սարիներու մէջ երբեք Ս․Հաղորդութիւն ընդունած չեւ :

Եկեղեցւոյ Ձեր Հայրական Օրհնութիւնք , մասշիւ ի հաւ-
բոյր Ս.Աջոյր եւ Մեաւ Ձեզ անձնուէր

Փիքսպուրկ , 5 Ապրիլ 1901 .

3 • ՇԱՔԱՐԵԱՆ
(Ա.Տաբազարցի)

ՆԱՄԱԿ ԼՈՆԴՐԱՅԷՆ

Արժ. Տեր Հայր ,


Ձեր Արժանապատեան հովուական Այցելութեան միջոցիւ ի Լոնտրա , Չասկական Սուրբ տօնիւ առիւ , կը յիշեմ որ մեզ եւս այցելելու պատիւն ետոյք , ձեր շնորհաբերութեամբ ՚ք ի մեր բնակարան՝ յարգաւ սնորհակեաց սովորական արարողութեան : Ձեր մեկեկեղէն զկնի , իմ կրտսեր որդիս , որ ուշադիր եղած էր սնորհակեաց հանդիսին , հետաքրքիր էր ինքնուզ գրասարանութիւն խորհրդոյն եւ նոյն իսկ ի մասին սոյն մեր Եկեղեցւոյն աւանդական արարողութեանն , գորս եւ բացատրեցի ըստ իմ կարեաց : Ի միջի բազում այլ հարցմանց , որպէս տղայք սովոր եւն առնել , հետաւնուտ էր նաեւս ինքնուզ նոյն իսկ ձեր անձնականին աղաքաւ , աշխիւնն , թէ անուրի՝ եք թէ ա՛նուսնացած : Պատասխանեցի՝ այր ա՛նուսնացած եք : Առ այս պատասխանի , ասաց . «Բայց Հայրիկ , անցեալ օր խօսակցութեան միջոցիւ , շեցի որ կ'աւեիք անուսնութիւնն արգելուած է վասն մեր բարձրագոյն կղերից . ուրեւն ընդե՞ր է որ քահանայք , որք ըստ իւրեանց կոչման միեւնոյն սուրբ արքայտօնի ծառայելու որպէս բարձրագոյն կղերիք , կարող եւն անուսնակալ » : Ես մնացի տարակուսեալ , քանզի եւս ինքս իսկ զուսարանութեան կարօտութիւնն կ'զգաւ այս առարկային մասին :

Որքան գիտեմք պատեանց միջոցաւ , մեր Առաջին Հայրապետն Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եւ քանի մի իւր յաջորդք Սուրբ Անուսնութեան կարգին մէջ մեան , ուրեւն ե՞րբ էր որ այդ օրէնք խախտուեց եպիսկոպոսաց եւ վարդապետաց մասին , եւ առ ի՞նչ պատճառի : Եւ , թէ առարկութիւն չիկնի թէ նոքա այդ խտրանաց եկարկուեցան , որպէս զի ընտանեկան կապերից ազատ չիկելով կարող չիկին արքակեցութեամբ եւ բոյր մտքով Սուրբ Եկեղեցւոյն ծառայել եւ այլն , ուրեւն ինչպե՞ս է որ քահանայք այդ ասնունա-

փոսկ վիճակին հպասակ չեմ : Այս արքերուքին անհասկանալի կ'ընդհատեմ : Այսպէս , մի' կարծիք որ ես փաստաբան եմ անուրի կեանքին , ըստ որում կարծիք յայտնած չեմ . բացարձակ կարօտեմ : Այլ բան մի եւս , քանի որ քանակաւ արտադրուիլն ունին անուսանալոյ , ընդհ'ր է որ անկարող են երկրորդ անգամ անուսանալ երկ որ արտադրող շինին իւրեանց անուսին երիտասարդ հասակին մեջ մահուանք կարուսանել , որպէս որ բազմիցս պատահի :

Մեծապէս կ'պարտաւորեմ , եւ ինձ եւ իմ նմանեաց համար մեծ բաւարարութիւն կը չիւնի , երբ սորա տրամաբանութիւնն պարզապէս չունի , քանզի ըստ իմ հասկացողութեան , կացութիւնն հակասական կ'երեւի : Մնամ Ձեր խոնարհ ծառայ Լօնդօն , 30 Մայիս 1901 ՄՆԱՅԱԿԱՆ ԱՍԵՓԱՆՆՈՍԵԱՆ

Ծան . ետք — Մեծարգոյ Թղթակցիս կողմանէ յուզեալ հարցումն վերջին տա ինձ շատ անգամ մեր ժողովրդեան և ազգային լրագրութեան խորհրդածութեան առարկայ եղած է : Խնդիրն այնքան կարեւոր է և այնքան զգուշաւոր և բազմաճայեաց քննութեան կարօտ է , որ անկարելի է աստ համառօտ պատասխանով գոհացում տալ մեր պատուական Թղթակցին : Կը խոստանամք յառաջիկայ Թըրքով ըստ կարի մերում բացատրել այն խնդիր :



ԵՐԿՈՒ ՈՍՈՒԹՆԵՐ

(Շար . Տես էջ 157 .)

Հոգին Քաջալերիչ

Անմիա մարմին՝ դուն հոգ մ՝ ըներ .
 Լաւ ըմբռնէ՛ իմ խրրատներ .
 Նեղ ճանրան քեզ՝ չը մեոցըներ .
 Նաեւ երբեք՝ վընաս չըներ :

Լայն ճանապարհ՝ մի թըմրագեղ
 Կուտայ , խարուողք՝ կուտեն շատ հեղ .
 Թըմրած չունի՛ արթուն ըզեղ .
 Ինչպէս որ դու՝ ո՛վ խելայեղ :

Բայց մի՛ խարուիր՝ իբր անըզգայ .
 Մեռնելէդ վերջ՝ յարութիւն կայ .
 Երբոր Յիսուս՝ դատաստան դայ .
 Չարագործաց՝ պատիժ կուտայ :

Մարմին Անհաւատ

Սուտ խօսքերէդ՝ ես չեմ խարուիր .
 Խարող ընկեր՝ լաւ համոզուիր .
 Ես երբ դառնամ՝ հոգ ու՝ մոխիր .
 Ուր տեղ ըլլալս՝ ալ չիմացուիր :

Մոխիրն ի՞նչպէս՝ կ'ոսկորանայ .
 Կամ հողն ի՞նչպէս՝ կը մարմնանայ .
 Բընութեան դէմ՝ է ասիկայ .
 Երբ կը յիշեմ՝ խընդալս կուգայ :

Դուն ալ երբոր՝ ինծոյ՛ զատուիս .
 Շունչ մ'ես , օգին՝ մէջ կը ցրուիս .
 Թէ որ խօսքիս՝ չը համոզուիս .
 Քեզ հետ թըշուան՝ կընես դու զիս :

Հոգին Սասիչ

Աստուծոյ դէմ՝ կը հայհոյես .
 Ո՛վ անըզգամ՝ եւ լիբբ երես .
 Սուրբ Հոգւոյն խօսք՝ սու՞տ կըհանես .
 Դու մեծ պատժի՛ իսկ արժան ես :

Յիշէ՛ ձեռքովդ՝ ցանած սերմեր .
 Որ հողի մէջ՝ են կորսւբեր .
 Ժամանակին՝ բոյս կուտան վեր .
 Կաճին , կըլլան՝ վերջ պըտղաբեր :

Դու ալ իբրեւ՝ մի սերման հատ .
 Հոգ մըտնալով՝ կըլլաս անյայտ .
 Բայց վերջին օրն՝ ինծ հետ ի յայտ .
 Կեղնես , երբոր՝ մըտնենք ի դատ :

Մարմինն Յուսահաս

Դու ինձ ծանրը՝ բեռ ես եղած .
 Ու փաստերով՝ զիս խիստ նեղած .
 Ուրախութիւնս՝ սուգ ես փոխած .
 Զիս ալ ոտքիդ՝ տակն ես կոխած :

Եթէ խօսքիդ՝ մըտիկ ընեմ .
 Ուտել խըմել՝ պէտք է թողնեմ .
 Կերեղմանին՝ մէջը մըտնեմ .
 Եւ իմ ձեռք՝ մահըս գըտնեմ .

Ահգու՛թ , դու զիս՝ շատ մի՛ քըշեր .
 Դէպի խաւարն՝ ու մութ գիշեր .
 Դատի խընդիբ՝ ինձ մի յիշեր .
 Իմ սըլլատէս հա՛ն՝ այդ սուր փուշեր :

Հոգինն Յորդորիչ

Այս կեանքիս մէջ՝ պէտք է որ լանք .
 Որ միւս կեանքովն՝ ուրախ ըլլանք .
 Յուսով ապրինք , անյոյս չըլլանք .
 Որ դըժոխքէն ազատ մընանք .

Կե՛ր ու խըմէ , պարկեշտ կեցի՛ր .
 Յաւելորդէն՝ ըզդուշացի՛ր .
 Անմեղ խաղով՝ զըւարճացի՛ր .
 Բայց ամէն հեղձ չափըդ գիտցի՛ր :

Այլ չեմ յուսար՝ որ զգոյշ կենաս .
 Եւ դըժոխքէն՝ վախ ունենաս .
 Զի կեղծութեամբ՝ սուգ կը մըտնաս .
 Որ զիս կամքիդ՝ հաւնած գըտնաս :

Մարմինն Արկամուլ

Կեր ու խուճըս՝ կը քիչցընես .
 Խընայելով՝ չափ կը դընես .
 Ես հասկըցայ՝ դու ջանք կընես .
 Որ անօթի՛ գիս մեռցընես :

Կեր ու խուճով՝ կը սընանիմ .
 Եւ քաջութեամբ՝ միշտ կը բանիմ .
 Կըռնակով բեռ՝ շուտ կը տանիմ .
 Զօրեղ առիւծ՝ կը նըմանիմ :

Ուրեմն թէ գիս՝ լաւ կը հոգաս .
 Պարարտ ուտեստ՝ պէտք է միշտ տաս .
 Եթէ գինիս՝ չընես պակաս .
 Զիս քաջ ընկեր՝ քեզ կուռնենաս :

Հոգին Իրաւագոս

Պարկեչտ մարդոց չես հաւանած .
 Որոց կըսես թմբած մնում .
 Բայց չը կարծես քեզ արթնցած .
 Որ հեշտութեամբ ես յիմարած :

Յիմարանոցն եկու՛ր գընանք .
 Որ հեշտագո՛հ խնթեր տեսնանք .
 Նոցա վիճակ լաւ հասկընանք .
 Եւ զըզուելով յիտրս դառնանք :

Կարկեչտ մարդեր ո՛չ են թրմբած .
 Այլ սուրբ սիրով են ըզմայլած .
 Շատերուն մէջ քիչ են եղած .
 Քան մարգարիտ ի մէջ խըճաց :

Մարմին Կուսպոս

Նախնի մարդերն էին խելքով .
 Շատ աստուածներ հընարելով .
 Խորհրդարար դախս պաշտելով .
 Եւ բարեբաղդ կեանք վարելով :

Մի Բագոս կար գինի սըւող .
 Մի Արես կար շատ սըւփացնող .
 Հերմէս մի կար գող պաշտպանող .
 Ասոնք էին կիրք յագեցնող :

Ինծ ալ պէտք են միշտ աստուածներ .
 Իմ անձնական պաշտած կիրքեր .
 Որոնք կ'աճին՝ սըրտիս խորեր .
 Եւ կը շոյեն իմ անդամներ :

Հոգին Սաստիչ

Ո՛վ մուկսէր մարմին թըշուառ .
 Մինչև յի՞րբ կաս այդչափ յամառ .
 Ո՛վ անամօթ և անպատկառ .
 Որ դարձած ես խնթ ու խելառ :

Թողուցեր ես քու Տէր Աստուած .
 Եւ պիղծ կըրո՞ց անձրդ տըւած .
 Այդչափ կոյր ես դուն գըսնուած .
 Որ չար գիււա՞ց ես յանձնուած :

Չա՛յն պաշտէ որ ստեղծող Տէր է .
 Եւ մեզքերդ ալ քեզ կըներէ .
 Կիրքերդ թող տուր , զԱստուած սիրէ .
 Որ քեզ համար անձնադիր է :

Մարմին Կախարչ

Գուշակութիւնն է յարգելի .
 Ինծի համար և սիրելի .
 Որով կըլլամ երանելի .
 Եւ շատ մարդոց նախանձելի :

Հրմայութիւնն ինձ մեծ շահ է .
 Փորձանքներէ զերձ կը պահէ .
 Եւ գիտութեան հաստատ գահ է .
 Եւ շատ սըրտեր ինձ կ'ընծայէ :

Ո՛վ որ ատէ գուշակութիւնս .
 Կամ գէշ կարծէ զանի մարդուն .
 Նա ապուշ է , և չէ արթուն .
 Եւ վընասող իրեն շահուն :

Հոգին Յանդիմանիչ

Թըմբած դուն ես դուէն խարուած .
 Կախարչութեան յոյս ես դըրած .
 Սատանային դործիչ զարձած .
 Եւ Տէր Աստուածդ ալ մոռացած :

Կախարչութեան արհեստ սովորող .
 Չար դուերուն է ծառայող ,
 Շատ հողիներ մոլորցընող .
 Սատանային գերի ընող :

Կախարչութեան մի՛ լինիր խոյզ .
 Սեւ մի՛ բերեր իմ աչքերուն .
 Մի՛ կըտրեր մեր փըրկութեան յոյս .
 Չար գործըրդ թող պաշտէ՛ զՅիսուս :

Մարմին Ծուլ

Անշահ գործ է աշխատութիւն .
 Որ կ'արգիլէ հանդիսան ու քուն .
 Շատ աշխատանք լաւ չէ մարդուն .
 Որ զայն կընէ հիւանդ նըկուն :

Ինծի լաւ չէ շատ աշխատանք .
 Որ միշտ կըլլայ անօգուտ ջանք .
 Անդամներուն յոյժ մեծ տանջանք .
 Եւ սըրտիս ալ խոր հառաչանք :

Երբոր գործի զիս կը ղըրկես .
 Ահ ու գողով զիս կըծածկես .
 Ճանրաս առիւծ կայ , կըսեմ ես .
 Գիտին կ'իյնամ մեծ երկիւղէս :

Հոգիւն Գանդիմանոց

Գիտեմ ըզքեզ , ո՛վ չար գազան .
Ապրատամբ ես , ու խիստ դաժան .
Կատաղութեամբ ես շուն վազան .
Շատկեր գայլէն ^{ու} չես զանազան :

Քեզի պէտք են միշտ ծեծ ու տատ ,
Որ զըսպըւիս իբրեւ գըրատտ .
Ակամայից լինիս ըզդատտ .
Յետոյ ըլլաս հեզ ու նուատտ :

Որովհետեւ քու մոլի վարք .
Քեզ դատած է անասնոց կարգ .
Քու գէշ գործքովդ ես միշտ անարգ .
Չես մտնար դու լաւ մարդոց շարք :

Մարմին Ըմբոս

Ես քեզ նըման չեմ ուզեր լալ .
Այլ գինիով միշտ արբենալ .
Ուրախ զըւարթ երգել , խընդալ .
Զարնել , ջարդել հայհոյանք տալ :

Ինծի պէտք է վըրազ իշխել .
Եւ ոտից տակ քեզի կոխել .
Հանդարտ մարդերն ալ միշտ չեխել .
Կըռուարարաց քովն յաճախել :

Այսպէս խընջոյքն է իմ փափաք .
Որով կընեմ ծաղր ու կատակ .
Երբեք քեզի չեմ հըպատակ :
Ահա ա՛յս է՝ իմ նըպատակ :

Հոգիւն Գանդիմանիչ

Ահա՛ խօսքըս հատատեցեր .
Որ կատաղի շուն ես դարձեր .
Դուն ալ բերնովդ վըկայեցեր .
Որ ճիշդ կըսեմ քու չար գործեր :

Արբած ատենդ խիստ անառակ .
Ամէն կերպով խաղք խայտառակ .
Կապկի նըման ես այլանդակ .
Քեզ կըձըգես կոխողաց տակ :

Ա՛յս է եղեր քու քաջութիւն .
Հազար անգամ վա՛յ քու գըլխուն .
Բիւր թուք ու մուր քու երեսնուն .
Ե՞րբ խոր քընէդ կարթըննաս դուն :

Մարմին վաւառոս

Մի օրէնք կայ ազատական .
Շատ գեղեցիկ և հեշտական .
Զուգաւրումն անասնական .
Որ ինձ հաճոյ և սիրական :

Անասուններ անժամանակ .
Կըզուգանան միշտ բացարձակ .
Մայրոց պէս չին արգելափակ .
Այլ անխրտիր ջոկ երամակ :

Մարդն ալ երբոր կ'ամուսնանայ .
Երանի թէ այսպէս ըլլայ .
Բայց մինչ ի մահ կ'ընկերանայ .
Բաժնուելու ճար չի գըսնայ :

Հոգին երասիչ

Անարգ ցեղից շատ ես հաւնած .
Նոցա վարքին ալ հետեւած .
Ընտրածիդ մէջն ես սըխալած .
Զի անպատիւ բարքն ես սիրած :

Անասնական խառնակութիւն .
Միայն հարկ է անբաններուն .
Անասնակեաց մարդոց անուն .
Տէր կոչած է պոռնիկ ու շուն :

Մարդիկ պատուով կ'ամուսնանան .
Եւ պատուական ցեղ կ'ունենան .
Թէ որ մաքուր սիրով կենան .
Երանական փառք կըստանան :

Մարմին Հեռաստէր

Թըմրած մարդիկ շատ անմիտ են .
Որ սիրելու կերպ չը գիտեն .
Սիրել սիրուել զուտ տեղ կ'ատեն .
Վասըն զի խիստ յամառկոտ են :

Մարմնական սէրն եմ ճաշակող .
Նորա համն է զիս պարարող .
Թըմրած մարդերն եմ անարգող .
Սէր ունեցողքն ալ միշտ յարգող :

Եկու՛ր չըլլանք անըզգայուն .
Զոր պատուոյ տեղ դըրած ես դուն .
Հետեւելու է շատերուն .
Որք յարած են մարմնոյ սիրուն :

Հոգին Յանդիմանիչ

Դու ի բընէ՝ թոյլ ես ու վատ .
 Եւ ծուլութեամբ՝ միշտ անաշխատ .
 Այլոց վըրայ՝ նրբանըկատ .
 Բայց չես լինիր՝ բեղ անձնադատ :

Ժամանակըդ՝ միշտ կըտրիճ կաց ,
 Աշխատանքովդ՝ ճարէ քու հաց .
 Այսպէս կըլլաս՝ գու բարեկեաց .
 Լաւ օրինակ՝ առաքինեաց :

Աշխատութիւն՝ խիստ մեծ շահ է .
 Սուրբ և առողջ՝ մեղ կը պահէ .
 Իսկ ծուլութիւն՝ միշտ անճահ է .
 Ամէն չարեաց՝ ծընող նա է :

Մարմին Գող

Թէ որ դուն զիս՝ թողուս կամբիս .
 Կերպ կը գըտնեմ՝ աշխատանքիս .
 Թէ ձեռընտու՝ լինիս ջանքիս .
 Հաւնած կըլլաս՝ դուն իմ վարքիս :

Ես գողութիւնն՝ եմ ինձ ընտրած .
 Եւ քաջութիւն՝ զայն համարած .
 Մտով կըլլամ՝ միշտ ըզբաղած .
 Եւ շատ արդիւնք՝ ձեռքըս բերած :

Երբ բազաննեմ՝ ու գողանամ .
 Իմ պիտոյքներս՝ շուտ կըստանամ .
 Ուղեւորաց՝ մահ կըսպանամ .
 Շատ ապրանաց՝ տէր կըգտնամ :

Հոգին Յանդիմանիչ

Աստուծոյ դէմն՝ ես յանդըգնած .
 Եւ մարդոց դէմն՝ ուլ մոլեգնած .
 Քեզ չար գործքերն՝ ես նախընտրած .
 Որովհետեւ՝ չարն ես սիրած :

Ծուլութեամբըդ՝ խիստ անարի .
 Գողութեան մէջ՝ քաջ և արի .
 Դու աման ես՝ ամէն չարի .
 Չես ունեցող՝ մասըն բարի :

Եթէ լինիս սպանող ու գող .
 Սիրտըդ կելլէ՝ միշտ թունդ ու գող .
 Քեզի կըսեմ՝ չար գործը թող .
 Որ վերջ չըլլաս պատիժ կըրող :

(Շարունակելի)

Ա. Զ. Դ

Կրօնաթերթիս անցեալ տարուայ թիւերն այլ ևս բաժանորդագրութեան պայմանաւ չեն ծախուեր. այլ Ա. Ժ թիւերն միասին կը վաճառուին՝ անկազմ 4 Շիլինի (5 Ֆրանքի). գեղեցիկ կանաչագոյն լաթակազմով՝ ոսկեզօծեալ վերնագրով՝ 5 Շիլինգի (6 Ֆրանքի):

Յետայսու նոր բաժանորդագրութիւն կընդունուի միայն ներկայ տարւոյս Յունուարէն կամ առաջիկայ Յուլիսէն:

